

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՈՐԵԼԵԱՆԻՆ ԱՌԹԻԻ

Երբ այս համազգային կաղձակերպուած ցոյցերը տեղի կ'ունենան մեր ցեղային ամէն խաւերուն մէջ, ըլլան անոնք աղքատ, ըլլան հարուստ, կաթուղիկ-հայ թէ Բողոքական-հայ, կարելի չէ չհպարտանալ այն փառաւոր անցեալով, զոր ազգը ունեցեր է դարեր առաջ, իր մէջ ունենալով այնպիսի հոյակապ մարդիկ որոնք աշխատեր են մեր տառերու գիւտին և տպագրութեան համար:

Պատմութիւնը մեզի կը սովորեցնէ թէ հայկական տառերու և կամ բառերու գիւտէն շատ առաջ, ստիպուած էինք դիմել մեզ դրացի Ասորւոց և Յունաց, անոնցմէ փոխ առնուած լեզուներով կը գրէինք և կամ կը խօսէինք:

Բայց այսօր ո՛րքան պէտք է հրպարտանալ, որ տասնըհինգ դարէ ի վեր ունինք մեր ուրոյն տառերը և լեզուն, և չորս դարէ ի վեր ունինք մեր ուրոյն տպագրութիւնը:

Բայց արդեօք մենք գի՛տենք մեր ձեռքը գտնուածին յարգը. ամսո՛ւս, ես ցաւելով պիտի ըսեմ թէ ոչ: Բռնապետութեան շրջանէն մեզի աւանդ մնացած և մեր արեան մէջ թափանցած շատ մը յոռի սովորութիւններ ունինք: Հին ատենը մենք հայերս մասնաւորապէս ստիպուած էինք հայերէնի տեղ թուրքերէն խօսիլ, մասնաւոր հանրային վայրերու մէջ, և ոմանք աւելի յառաջ երթալով իրենց աւազանի անուան կցեցին թուրքերէն անուններ: Եւ ցաւալի կէտը այն է որ մինչեւ ցարդ, այսինքն սահմանադրութենէն յետոյ իսկ մնացին այս սովորութիւնները:

Ես մտքէս երբէք չեմ անցունէր պօյքօթ հոչակել թուրք լեզուին համար, թող աղնիւ հայրենակիցներս

յետին մտքի արդիւնք, և կամ մուկաւանդութիւն չը նկատեն այս գրածներս: Անգամ մը տեսնենք թէ մեր Յոյն կամ Հրեայ հայրենակիցները պօյքօթի համար իրենց մէջ երբեք թուրքերէն չեն խօսիր:

Ասկէց երեք տարի առաջ երբ գործով Աթէնք և յետոյ Իզմիր գացի, հոն Յոյները առ հասարակ դիմացնին ելլող օտարականին հետ յունարէն կը խօսէին, ըլլային անոնք թուրք, հայ, և կամ եւրոպայի:

Հոս միթէ այսպէս չէ: Բերայի շիտակի Յոյն վաճառատուները կը տեսնանք որ առանց բացառութեան յաճախորդաց հետ անխտիր յունարէն կը խօսին: Մինչեւ իսկ գիտնալով որ եկող յաճախորդը յոյն չէ և կամ յունարէն չը գիտէր: Որո՞ւ հոգ, իրենց լեզուն միշտ յառաջ կը քշեն:

Ես բնաւ յաւակնութիւն չո՛ւնիմ հոս ըսելու թէ մենք ալ անոնց պէս պէտք է ընենք և կամ մեր Հայ լեզուն ընդհանրացնելու համար այս տեսակարտակարգ միջոցներու դիմենք: Սակայն կը փափաքիմ, և ինչ որ կարծեմ ամեն պարտաճանաչ Հայ այսպէս պիտի մտածէ, գոնէ մեր մէջը ջանանք զուտ հայերէն խօսիլ:

Յոյներուն ըրածը ըստ իս չափազանցութիւն է, սակայն թող ներուի ինձ ըսել թէ, մերն ալ ազգային նկարագրի պակասութիւն է: Եւ ցաւալին այն է որ մինչև ցարդ դարման մը չէ խորհուած արգիլելու համար այս յոռի սովորութիւնը:

Անշուշտ դիտած էք շոգենաւներու և կամ հանրային վայրերու և մինչև իսկ ընտանեկան շրջանակի մէջ, թաղային վարժարաններէ շրջանաւարտ երիտասարդներու խօսակցութիւնները որոնք իրենց կէս մը հայերէն, և կէս մը թուրքերէն, խօսուածներով շատ անգամ օտարներու ծաղրանքին

կ' արժանանան . արդեօք ամօթ չէ՞ ա-
սիկա մեզի :

Ես կը յուսամ թէ քիչ մը կամք
և քիչ մը բարի կամեցողութիւն բա-
ւական պիտի ըլլայ , դարմանելու
այս կարգի տղեղ սովորութիւնները :

Ես պիտի առաջարկէի որ թէ հոս
և թէ գաւառները և մինչև արտա-
սահման ուր որ հայու թիւն կայ ,
զարգացեալ երիտասարդներէ միու-
թիւններ կազմուին , և իրենց տղէտ
ու օտարախօս եղբայրներուն սովբե-
ցնէին իբր Հայ անհատ խօսելու
աւագ պարտականութիւնը :

Այսօր այս մեծ Յորելեանին առ-
թիւ , պիտի մաղթէի մեր հասարա-
կութեան ամեն խաւերուն հաւասա-
րապէս , որպէս զի միանգամ ընդ
միշտ թօթափէին իրենց հին անտար-
բերութիւնը զէպի իրենց ազգը և
մանաւանդ մայրենի լեզուին որ ամեն
բանէ աւելի թանկագին և նուիրա-
կան է :